



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

**Արձանագրություն № 1**

Արևելագիտության ֆակուլտետի գիտխորհրդի 2015թ սեպտեմբերի 18-ի նիստի  
Նիստին ներկա էին գիտխորհրդի 25 (քսանհինգ) անդամներից 18-ը:

Օրակարգում՝

1. «Հովսեփ Օրբելու» անվան և «Նիկողայոս Մառի» անվան կրթաթոշակիներ ուսանողների թեկնածություններ առաջարկելու հարցը
2. Հեռակա ասպիրանտներին ընդունելության քննություններին մասնակցելու երաշխավորելու հարցը
3. ԵՊՀ գիտխորհրդի ընտրովի անդամի ընտրության հարցը
4. Ասպիրանտների թեմանների և դեկավարների հաստատման հարցը
5. Մենագրությունները հրատարակության երաշխավորելու հարցը

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Իրանագիտության ամբիոնի երրորդ կուրսի ուսանող Լիլիթ գառնիկի Հարությունյանի թեկնածությունը «Հովսեփ Օրբելու» անվան կրթաթոշակին ներկայացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ս. Տոնիկյանը, թուրքագիտության ամբիոնի վարիչ Ալ. Սաֆարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ներկայացնել իրանագիտության ամբիոնի երրորդ կուրսի ուսանող Լիլիթ գառնիկի Հարությունյանի թեկնածությունը «Հովսեփ Օրբելու» անվան կրթաթոշակին:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող Գրիգոր Կամոյի Դովլաթյանի թեկնածությունը «Նիկողայոս Մառի» անվան կրթաթոշակին ներկայացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ս. Տոնիկյանը, թուրքագիտության ամբիոնի վարիչ Ալ.

Մաֆարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ներկայացնել իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող Գրիգոր Կամոյի Դոկլայթյանի թեկնածությունը «Նիկողայոս Մառի» անվան կրթաթոշակին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2015 ուս.տարվա շրջանավարտ Մարիամ Արսենի Մխիթարյանի՝ ասպիրանտուրայի (հեռակա ուսուցմամբ) քննություններին մասնակցելը երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ, Ս. Կարաբեկյանը, Ս. Տոնիկյանը, Ա. Սողոմոնյանը, Վ. Ոսկանյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – երաշխավորել արաբագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2015 ուս.տարվա շրջանավարտ Մարիամ Արսենի Մխիթարյանի մասնակցությունը ասպիրանտուրայի (հեռակա ուսուցմամբ) ընդունելության քննություններին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2013 ուս.տարվա շրջանավարտ Նաիրա Էդիկի Սահակյանի՝ ասպիրանտուրայի (հեռակա ուսուցմամբ) քննություններին մասնակցելը երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ, Ս. Կարաբեկյանը, Ս. Տոնիկյանը, Ա. Սողոմոնյանը, Վ. Ոսկանյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – երաշխավորել արաբագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2013 ուս.տարվա շրջանավարտ Նաիրա Էդիկի Սահակյանի մասնակցությունը ասպիրանտուրայի (հեռակա ուսուցմամբ) ընդունելության քննություններին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2013-2015 ուս.տարվա շրջանավարտ Անժելա Ավագյանի՝ ասպիրանտուրայի (հեռակա ուսուցմամբ) քննություններին մասնակցելը երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ, Ս. Կարաբեկյանը, Ս. Տոնիկյանը, Ա. Սողոմոնյանը, Վ. Ոսկանյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – երաշխավորել թյուրքագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2013-2015 ուս.տարվա շրջանավարտ Անժելա Ավագյանի մասնակցությունը ասպիրանտուրայի (հեռակա ուսուցմամբ) ընդունելության քննություններին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2013-2015 ուս.տարվա շրջանավարտ Հովհաննես Սամվելի Սարգսյանի՝

ասպիրանտուրայի (հեռակա ուսուցմամբ) քննություններին մասնակցելը երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Ս. Կարաբեկյանը, Ս. Տոնիկյանը, Ա. Սողոմոնյանը, Վ. Ոսկանյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - երաշխավորել իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2013-2015 ուս.տարվա շրջանավարտ Հովհաննես Սամվելի Սարգսյանի մասնակցությունը ասպիրանտուրայի (հեռակա ուսուցմամբ) ընդունելության քննություններին:

Լ Ս Ե Ց Ի Ն - ԵՊՀ գիտխորհրդում Արևելագիտության ֆակուլտետի ընտրովի անդամի ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը, արաբագիտության ամբիոնի վարիչ Ս. Տոնիկյանը, դոցենտներ Ս. Կարաբեկյանը, Ա. Սողոմոնյանը, ՈւՄ նախագահ Է. Գալստյանը:

ԵՊՀ գիտխորհրդի ընտրովի անդամի ընտրությանը ներկայացված էր երկու թեկնածություն՝ Ս. Կարաբեկյան (արաբագիտության ամբիոն) և Ռ. Մելքոնյան (թյուրքագիտության ամբիոն): Ծավալված քննարկումների արդյունքում արաբագիտության ամբիոնի կողմից առաջադրված թեկնածու Ս. Կարաբեկյանը հանեց իր թեկնածությունը և առաջարկեց, եթե այլ թեկնածուներ չեն առաջադրվում, ապա անցկացնել բաց քվեարկություն: Այլ թեկնածուներ չառաջադրվեցին և գիտխորհուրդը որոշեց ԵՊՀ գիտխորհրդի ընտրովի անդամի ընտրության համար բաց քվեարկության դնել Ռ. Մելքոնյանի թեկնածությունը:

Բաց քվեարկության արդյունքում նիստին ներկա գիտխորհրդի 18 անդամներից Ռ. Մելքոնյանի թեկնածությանը կողմ են քվեարկել 16-ը, դեմ 1-ը, ձեռնպահ՝ 1-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ - հիմք ընդունելով բաց քվեարկության արդյունքները արևելագիտության ֆակուլտետից ԵՊՀ գիտխորհրդի անդամ նշանակել Ռ. Մելքոնյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի ասպիրանտ Հարությունյան Հայկի գիտական ղեկավարի նշանակման և ատենախոսական թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Ս. Կարաբեկյանը, Ս. Տոնիկյանը, Ա. Սողոմոնյանը, Վ. Ոսկանյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - հաստատել արաբագիտության ամբիոնի ասպիրանտ Հայկ Հարությունյանի «Հարավարևելյան Թուրքիայի արաբախոս բնակչության բարբառների համեմատական վերլուծությունը» թեկնածուական ատենախոսության թեման (Ժ 02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ») մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., դոցենտ Սամվել Կարաբեկյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների փառալուծության ծրագիր – 2013»-ի շրջանակում բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանի և Ն. Պողոսյանի հեղինակած «Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրականության մեջ (20-րդ դարի երկրորդ կեսին -21-րդ դարի սկիզբ)» գիրքը հրատարակության երաշխավորելու հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ, Ս. Կարաբեկյանը, Ս. Տոնիկյանը, Ա. Մողմոնյանը, Վ. Ոսկանյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – երաշխավորել հրատարակության բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանի և Ն. Պողոսյանի հեղինակած «Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրականության մեջ (20-րդ դարի երկրորդ կեսին -21-րդ դարի սկիզբ)» գիրքը:

Լ Ս Ե Ց Ի Ն – թյուրքագիտության ամբիոնի դոցենտ բ.գ.թ., Ռ. Մելքոնյանի և ասիստենտ Մ. Աբրահամյանի հեղինակած «Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք» գիրքը հրատարակության երաշխավորելու հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ, Ս. Կարաբեկյանը, Ս. Տոնիկյանը, Ա. Մողմոնյանը, Վ. Ոսկանյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ – երաշխավորել հրատարակության թյուրքագիտության ամբիոնի դոցենտ բ.գ.թ., Ռ. Մելքոնյանի և ասիստենտ Մ. Աբրահամյանի հեղինակած «Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք» գիրքը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

Իսկականի հետ ձիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ